

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՍՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ ՎՅԱԶԵՍԼԱՎԻ

ՎԵՐԱԲԱՇԽԻՉ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԻԳ. 00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»  
մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2025

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АСРЯН НАРИНЕ ВЯЧЕСЛАВОВНА

ОСОБЕННОСТИ ОЦЕНКИ ВЗАИМОДЕЙСТВИЯ ПЕРЕРАСПРЕДЕЛИТЕЛЬНОЙ  
ПОЛИТИКИ И ЭФФЕКТИВНОСТИ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ В  
ПОСТСОВЕТСКИХ ГОСУДАРСТВАХ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по  
специальности 23.00.02 “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН-2025

Ատենախոսության թեման հաստատվել է  
**Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր

**Մարգարով Ալեքսանդր Ալեքսանդրի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝  
քաղաքական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
քաղաքական գիտությունների  
թեկնածու, դոցենտ  
Առաջատար կազմակերպություն՝

**Ենգոյան Աշոտ Փայլակի**

**Քալաշյան Վաչե Ռոմեովիչ**  
**Հայ-ռուսական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հունվարի 15-ին, ժամը 14:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:


Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի դեկտեմբերի 12-ին:

ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար, քաղաքական

գիտությունների թեկնածու, դոցենտ

 **Մարգարյան Առնակ Գեորգիի**

Тема диссертации утверждена в  
**Ереванском государственном университете**

**Научный руководитель:** доктор  
политических наук, профессор

**Маркаров Александр Александрович**

**Официальные оппоненты:**

доктор политических наук, профессор  
кандидат политических наук, доцент

**Ашот Пайлакович Енгоян**

**Ваче Ромеович Калашян**

**Ведущая организация:**

**Российско-Армянский университет**

Защита состоится 15 января 2026 г. в 14:00 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА. Адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ.

Автореферат разослан 12 декабря 2025г.

Научный секретарь

специализированного совета 056 МОНКС КВОН РА,

кандидат политических наук, доцент

 **Արնակ Գեորգիևիչ Տարգսյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Ժամանակակից պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման առանցքային նախապայմաններից է պետության վերաբաշխիչ քաղաքականությունը, որն իր ուրույն տեղն ունի պետական քաղաքականության ձևավորման և իրագործման գործընթացում: Հանրային քաղաքականության այս տեսակն այն առանցքային գործիքն է, որով պետությունը հավասարակշռում է սոցիալական անհավասարությունները, մեղմում շուկայի բացասական հետևանքները և ապահովում հանրային համերաշխության պատշաճ մակարդակ:

Ժամանակակից քաղաքական և տնտեսական համակարգերում վերաբաշխիչ քաղաքականությունը դիտարկվում է որպես սոցիալական արդարության, բնապահպանական կայունության և տնտեսական հավասարակշռության ապահովման կարևորագույն գործիք: Միաժամանակ, այն անմիջականորեն առնչվում է կայուն զարգացման հայեցակարգին, քանի որ առանց ռեսուրսների արդար բաշխման անհնար է հասնել սոցիալական, տնտեսական և բնապահպանական հետագծերի զարգացման հավասարակշռման: Այս է պատճառը, որ ՏՀՀԿ-ի, Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի օրակարգերում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության ուսումնասիրությունը: ավելին, այս հարցն արդիական է հատկապես հետխորհրդային պետությունների պարագայում, որտեղ պետական կառավարման համակարգերի ինստիտուցիոնալ կայացածությունը և հանրային քաղաքականության համապատասխան ուղղությունները դեռևս ձևավորման փուլում են:

Հետխորհրդային պետությունների զարգացման փորձը ցույց է տալիս, որ վերաբաշխման և կառավարման արդյունավետության միջև գոյություն ունի փոխադարձ կախվածություն: Մինչ որոշ երկրներում հաջողվել է ձևավորել հարաբերականորեն կայուն համակարգեր՝ հիմնված պետական պատասխանատվության և ինստիտուցիոնալ կառավարման արդյունավետության վրա (օրինակ՝ Մերձբալթյան երկրներ), մյուսներում դեռևս առկա են համակարգային խնդիրներ՝ պայմանավորված կառավարման թույլ ինստիտուտներով, թափանցիկության ցածր մակարդակով և քաղաքական անկայունությամբ (Կենտրոնական Ասիայի երկրներ):

ՀՀ-ի համար այս թեման ավելի քան արդիական է: Խորհրդային համակարգի փլուզումից հետո նորանկախ պետությունները կանգնեցին

բարդ անցումային փուլի առջև, մասնավորապես՝ պլանային տնտեսությունից շուկայական հարաբերությունների անցումը և քաղաքական ինստիտուտների վերակառուցումը ուղեկցվեցին կառավարման ճգնաժամերով, սոցիալական անհավասարության խորացմամբ և պետական կառավարման արդյունավետության անկմամբ: Այս պայմաններում վերաբաշխիչ քաղաքականությունը ստանձնեց երկակի դեր՝ դառնալով մի կողմից սոցիալական արդարության պահպանման միջոց, մյուս կողմից՝ պետական լեգիտիմության և հանրային վստահության ամրապնդման գործիք:

Վերոնշյալից բխում է, որ թեմայի արդիականությունը պայմանավորված է մի շարք գործոններով.

*Առաջինը՝ պետության սոցիալ-փոփոխական կայունության ապահովման անհրաժեշտությամբ:* Պետական վերաբաշխիչ քաղաքականությունը ուղղված է ոչ միայն տնտեսական աճի խթանմանը, այլև այդ աճի կայունության և հավասարակշռության ապահովմանը: Հետևաբար, պետության առաջնային խնդիրը կայուն տնտեսական և սոցիալական միջավայրի ստեղծումն է, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի զգում է իր ներգրավվածությունն ու պաշտպանվածությունը:

*Երկրորդը՝ փոփոխական անհավասարությունները մեղմելու և սոցիալական արդարությունը ապահովելու պահանջով:* Սա նշանակում է, որ արդարության ընկալումը ոչ միայն բարոյական, այլև քաղաքական կատեգորիա է. հասարակության կայունությունը մեծապես կախված է այն բանից, թե որքան արդար է ընկալվում պետական վերաբաշխիչ քաղաքականությունը:

*Երրորդը՝ միջազգային լավագույն փորձի կիրառման և համեմատական վերլուծության կարևորությամբ:* ՏՀՀԿ երկրների փորձը ցույց է տալիս, որ ճիշտ ձևավորված վերաբաշխիչ քաղաքականությունը կարող է համատեղել տնտեսական արդյունավետությունն ու սոցիալական արդարությունը: Համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու լավագույն մոդելները և հասկանալու, թե դրանցից որոնք կարող են հարմարեցվել հայկական իրականությանը:

*Չորրորդը՝ հեղինակավորության փորձի կիրառում, այդ թվում՝ ՀՀ-ում, արդյունավետ կառավարման և կայուն զարգացման ապահովման հրապարակությամբ:* Հետխորհրդային երկրներում վերաբաշխիչ քաղաքականությունը հաճախ բախվում է մի շարք խնդիրների՝ կոռուպցիա, թերզարգացած ինստիտուցիոնալ համակարգ, սոցիալական արդարության նկատմամբ անվստահություն և տնտեսական հենքի սահմանափակում: Հետևաբար, հրատապ հրամայական է մշակել վերաբաշխիչ քաղաքականության այնպիսի մոդել, որը համատեղում է

միջազգային լավագույն փորձը և տեղական առանձնահատկությունները՝ ապահովելով ոչ միայն սոցիալական պաշտպանություն և հավասարություն, այլև տնտեսական աճ և երկարաժամկետ կայունություն:

**Հիմնախնդրի գիտական մշակվածությունը:** Վերաբաշխիչ քաղաքականության և պետական կառավարման արդյունավետության փոխկապակցության հարցը տնտեսագիտության և քաղաքական գիտության շրջանակներում ուսումնասիրության ենթակա ամենաարդիական ուղղություններից է:

Տնտեսական անհավասարության ուսումնասիրության մեջ առանցքային դեր ունի Սայմոն Կուզնեցը<sup>1</sup>, ով ձևակերպեց «Կուզնեցի կորի» գաղափարը, ըստ որի՝ տնտեսական աճի սկզբնական փուլերում անհավասարությունը մեծանում է, իսկ զարգացմանը զուգահեռ՝ նվազում: Հետագա ուսումնասիրություններում, մասնավորապես Թոմա Պիկեթին<sup>2</sup> ապացուցեց, որ եկամտային անհավասարությունը ժամանակի ընթացքում կարող է խորանալ, եթե պետական քաղաքականությունները չնպաստեն հարկային բեռի արդարացի բաշխման և սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացմանը: Իսկ Մասգրեյվի<sup>3</sup> դասական մոդելը տարբերակում է պետության երեք հիմնական գործառույթ՝ բաշխիչ, վերաբաշխիչ և կայունացնող, որոնց միջոցով պետությունը ապահովում է հանրային բարիքների և սոցիալական արդարության հավասարակշռությունը:

Աճեմոլլուի և Ռոբինսոնի<sup>4</sup> ինստիտուցիոնալ մոտեցումը ցույց է տալիս, որ տնտեսական և քաղաքական համակարգերի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն ռեսուրսներով, այլև ինստիտուտների կարողունակությամբ և ներգրավվածությամբ: Այս տեսությունը կարևորում է ուժեղ և պատասխանատու պետական կառավարման ինստիտուտների առկայությունը, որոնք ապահովում են քաղաքացիների հավասար մասնակցությունը տնտեսական կյանքին: Սա կապակցում է վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության գաղափարները՝ ընդգծելով, որ կայացած

---

<sup>1</sup> Տե՛ս **Kuznets S.**, Economic Growth and Income Inequality // American Economic Review, vol. 45, 1955, no. 1:

<sup>2</sup> Տե՛ս **Piketty Th.**, Social Mobility and Redistributive Politics; Guliano P., Spilimbergo A. Growing Up in Recession: Beliefs and the Macroeconomy // NBER Working Paper, 2009, no. 15321, [https://conference.nber.org/conferences/2010/CS10/Giuliano\\_Spilimbergo.pdf](https://conference.nber.org/conferences/2010/CS10/Giuliano_Spilimbergo.pdf).

<sup>3</sup> Տե՛ս **Musgrave R. A.**, The theory of public finance, McGraw-Hill, New York, 1959:

<sup>4</sup> Տե՛ս **Acemoglu D., Robinson J.A.**, Economic Origins of Dictatorship and Democracy. New York: Cambridge University Press, 2006, Acemoglu D., Robinson J., The Rise and Decline of General Laws of Capitalism // Journal of Economic Perspectives, 2015.

պետությունն ունակ է նվազեցնելու անհավասարությունը ոչ միայն եկամտային, այլև հնարավորությունների մակարդակում:

Պետական կառավարման արդյունավետության գնահատման առումով զգալի ներդրում է ունեցել Կաուֆմանի և գործընկերների<sup>5</sup> կողմից մշակված Գլոբալ կառավարման ցուցիչների համակարգը (Worldwide Governance Indicators, WGI), որը ներառում է օրենքի գերակայությունը, կոռուպցիայի վերահսկումը, քաղաքական կայունությունը, կառավարության արդյունավետությունը և կարգավորման որակը: Այս մոտեցումը լայնորեն կիրառվում է տարբեր երկրների՝ ներառյալ Հայաստանի կառավարման համակարգերի համեմատական գնահատման համար: Սույն աշխատանքում հիմնական ուշադրությունը հրավիրվել է հատկապես վերջին երկու ցուցիչների վրա՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հենց կառավարության արդյունավետության և կարգավորման որակի արժեքներն են մատնանշում վերաբաշխիչ քաղաքականության իրականացման արդյունավետությունը:

Միաժամանակ, կառավարման տեսական մոտեցումների շրջանակում Դուգլաս Նորթի<sup>6</sup> ինստիտուցիոնալ տնտեսական տեսությունը կարևորում է օրենքների, ավանդույթների և արժեքային համակարգերի դերը տնտեսության զարգացման մեջ: Ըստ Նորթի՝ պետության հիմնական գործառույթներից է անորոշության նվազեցումը և վստահության բարձրացումը, որոնք, իրենց հերթին, ապահովում են տնտեսության կայուն զարգացումը և արդյունավետ վերաբաշխման մեխանիզմների ձևավորումը:

Ինչ վերաբերում է սոցիալական արդարության խնդրին, ապա այս իմաստով Ալեսինան և Անգելետոսը<sup>7</sup> ցույց են տալիս, որ տարաբնույթ հասարակություններում վերաբաշխման ծավալը կախված է այն բանից, թե քաղաքացիները ինչն են համարում հաջողության աղբյուրը՝ անձնական ջանքերը, թե՞ բախտը կամ սոցիալական պայմանները: ԱՄՆ-ի նման երկրներում գերակշռում է այն համոզմունքը, որ եկամուտը արդյունք է անձի աշխատանքի, ուստի վերաբաշխման պահանջարկը թույլ է: Եվրոպայում հակառակն է՝ շատերը հաջողությունը վերագրում են

---

<sup>5</sup> Տե՛ս **Kaufmann D., Kraay A., Mastruzzi M.**, The Worldwide Governance Indicators: Methodology and Analytical Issues, Draft Policy Research Working Paper, World Bank, Brookings Institution, September, 2010, <http://info.worldbank.org/governance/wgi/pdf/wgi.pdf>.

<sup>6</sup> Տե՛ս **North D.C.**, Institutions, Institutional Change, and Economic Performance, Cambridge: Cambridge University Press, 1990.

<sup>7</sup> Տե՛ս **Alesina A., Angeletos G.M.**, Fairness and Redistribution. The American Economic Review, American Economic Association., 2005

արտաքին գործոններին, ինչի հետևանքով բարձր է վերաբաշխման աջակցությունը: Այսպիսով, «արդարության ընկալումը» ձևավորում է վերաբաշխման քաղաքականության քաղաքական հիմքը:

Մեկ այլ աշխատության մեջ Ալեքսինան և Ռոդրիկը<sup>8</sup> ցույց են տալիս, որ տնտեսական աճն ու վերաբաշխումը հաճախ գտնվում են լարված հավասարակշռության մեջ, իսկ վերաբաշխման ծավալը որոշվում է ոչ միայն տնտեսական կարիքով, այլև արդարության և ջանքերի ընկալման սոցիալական նորմերով. սա նշանակում է, որ վերաբաշխման և տնտեսական աճի միջև գոյություն ունի հակադրություն, սակայն այն կախված է ինստիտուցիոնալ միջավայրից, և որ հասարակական համախմբվածությունը և քաղաքական կայունությունը պահանջում են չափավոր, բայց արդյունավետ վերաբաշխում: Այսպիսով, քաղաքական գործընթացները հաճախ հանգեցնում են այնպիսի հավասարակշռության, որտեղ վերաբաշխման մակարդակը որոշվում է քաղաքական ճնշումների և տնտեսական արդյունավետության բախման արդյունքում:

Միջազգային մակարդակում ՏՀՀ-ի<sup>9</sup>, Համաշխարհային բանկի<sup>10</sup>, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի<sup>11</sup> և Եվրահանձնաժողովի<sup>12</sup> փաստաթղթերը կարևորում են արդյունքահեն և համակարգային գնահատման մեթոդները՝ ընդգծելով հանրային քաղաքականությունների արդյունավետության չափման ցուցանիշների անհրաժեշտությունը: Այդ ցուցանիշների թվում առանձնանում են թափանցիկության մակարդակը, հաշվետվողականությունը, սոցիալական ներգրավվածությունը և ֆինանսական կայունությունը:

Վերաբաշխիչ քաղաքականության արդյունավետությունը չափելու համար միջազգային փորձը հենվում է նաև Զինիի գործակցի վրա<sup>13</sup>, որն արտացոլում է եկամուտների բաշխվածության և հասարակության սոցիալական բևեռացվածության մակարդակը: Այս ցուցանիշների համադրված վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել պետության սոցիալական քաղաքականության իրական ազդեցությունը:

---

<sup>8</sup> Տե՛ս **Alesina A., Rodrik D.**, Distributive Politics and Economic Growth, Quarterly Journal of Economics 109 (2), 1994.

<sup>9</sup> Տե՛ս **OECD**, OECD.stat ([www.oecd.org](http://www.oecd.org)).

<sup>10</sup> Տե՛ս Համաշխարհային բանկ, <https://info.worldbank.org/>

<sup>11</sup> Տե՛ս **UNDP**, Poverty, Inequality, and Social Policy Reform in the Former Soviet Union, 2009, <https://www.undp.org/sites/g/files/zskgke326/files/migration/eurasia/Poverty-inequality-and-social-policy-reform-in-the-former-Soviet-Union.pdf>.

<sup>12</sup> Տե՛ս **European Commission, Development and Cooperation** – EuropeAid (n.d.) ‘Human Rights and Democracy’. [http://ec.europa.eu/europeaid/what/humanrights/index\\_en.htm](http://ec.europa.eu/europeaid/what/humanrights/index_en.htm)

<sup>13</sup> Տե՛ս **Gini K.**, On the Measure of Concentration with Special Reference to Income and Statistics, Colorado College Publication, General Series No. 208, 1936.

Ինչ վերաբերում է հետխորհրդային տարածքի երկրներին, ապա այստեղ պետական կառավարման արդյունավետության մասին պատկերացումները սահմանափակվում են «բավարար արդյունավետ կառավարման» հայեցակարգով (Good-Enough Governance): Այսպես, Գրինդլը<sup>14</sup> ձևակերպել է «բավարար արդյունավետ կառավարման» մոդելը՝ որպես «արդյունավետ կառավարման» գաղափարի իրատեսական տարբերակ: Նա պնդում է, որ զարգացող և անցումային երկրներում իդեալական կառավարման չափանիշների կիրառումը հաճախ անհնար է ինստիտուցիոնալ թույլ հիմքերի և ռեսուրսների սահմանափակության պատճառով: Ուստի անհրաժեշտ է կենտրոնանալ նվազագույն կենսունակ կառավարման որակի ապահովման վրա, որը թույլ կտա հասնել կայուն զարգացման և սոցիալական հավասարակշռության: Նույն գաղափարի շրջանակներում Անդրյուսը<sup>15</sup> զարգացրել է «կառավարման հարմարվողական մոդելը», որը շեշտում է, որ բարեփոխումները պետք է հիմնվեն տեղային իրականության և փորձի վրա: Նա քննադատում է ներմուծված արդյունավետ կառավարման չափորոշիչները՝ նշելով, որ յուրաքանչյուր երկրի արդյունավետ կառավարման ձևը պետք է համապատասխանի հատուկ իր համատեքստին: Իր հերթին, Լևին<sup>16</sup> պաշտպանում է այն գաղափարը, որ կառավարումը պետք է զարգանա ներկա ինստիտուցիոնալ և քաղաքական հիմքերի վրա. նրա մոտեցումը հիմնված է պրագմատիզմի և էվոլյուցիոն զարգացման սկզբունքների վրա, որոնց համաձայն՝ բարեփոխումները պետք է իրականացվեն աստիճանաբար՝ հենվելով գործող կառավարման համակարգերի ուժեղ կողմերի վրա:

Հայաստանի համար այս տեսական մոտեցումները հատկապես կարևոր են, քանի որ վերջին տարիներին ՀՀ հանրային կառավարման համակարգում իրականացվող բարեփոխումները միտված են պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը, սոցիալական

<sup>14</sup> Տե՛ս **Grindle M. S.**, Good Enough Governance: Poverty Reduction and Reform in Developing Countries, *Governance: An International Journal of Policy, Administration, and Institutions* 17 (4), 2004, 48. **Grindle M. S.**, Good Governance: The Inflation of an Idea, Center for International Development Working Paper No. 202 (Harvard University, October 2010); Levy B., *Working with the Grain: Integrating Governance and Growth in Development Strategies*, Oxford University Press, 2014.

<sup>15</sup> Տե՛ս **Andrews M.**, Good Governance Scripts: Will Compliance Improve Form or Functionality? in Jomo Kwame Sundaram and Anis Chowdhury, eds., *Is Good Governance Good for Development?* United Nations Series on Development (London: Bloomsbury Academic, 2012).

<sup>16</sup> Տե՛ս **Levy B.**, The Case for Principled Agnosticism, *Journal of Democracy* 21, no. 4 (October 2010), Levy B., *Governance reform: Getting the fit right*. Public Administration and Development 35(4), PAD-15-0064.R1, 2015.



արդարության պատշաճ մակարդակի նվաճմանը և տնտեսական անհավասարության նվազեցմանը: Մասնավորապես, ՀՀ կառավարության ռազմավարական փաստաթղթերում (ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր<sup>17</sup>, Տնտեսական արձագանքման ծրագիր<sup>18</sup>, ՀՀ հանրային կառավարման համակարգի բարեփոխումների ռազմավարություն<sup>19</sup>) առանձնացվում են արդյունավետ հանրային ծառայությունների մատուցման, հարկաբաշխման արդարացիության և թափանցիկության մակարդակի բարձրացման խնդիրները:

Այսպիսով, գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ վերաբաշխիչ քաղաքականությունը և կառավարման արդյունավետությունը փոխկապակցված են՝ որպես սոցիալական կայունության, տնտեսական աճի և ինստիտուցիոնալ վստահության հիմնաքարեր. արդի մոտեցումները վերաբաշխիչ քաղաքականությունը դիտարկում են ոչ միայն որպես սոցիալական աջակցության կառուցակարգ, այլև կառավարման արդյունավետության և ինստիտուցիոնալ կայունության ցուցանիշ:

**Հետազոտության վարկած:** Ենթադրվում է, որ կառավարման արդյունավետության և վերաբաշխիչ քաղաքականության արդյունավետության միջև գոյություն ունի ուղղակի և փոխադարձաբար ամրապնդող կապ. այսպես, այն պետություններում, որտեղ պետական կառավարման համակարգը բնութագրվում է բարձր ինստիտուցիոնալ կարողություններով, թափանցիկությամբ և հաշվետվողականությամբ, վերաբաշխման քաղաքականությունը ավելի նպատակային է, սոցիալական արդյունքները՝ հավասարակշռված, իսկ սոցիալական անհավասարությունները՝ ավելի մեղմ: Մինչդեռ թույլ կառավարման պայմաններում նույն քաղաքական գործիքները կորցնում են իրենց արդյունավետությունը՝ հանգեցնում ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործման, կոռուպցիոն ռիսկերի և հանրային վստահության անկման: Այսպիսով, վարկածը հիմնվում է այն նախադրյալի վրա, որ արդյունավետ կառավարումն առանցքային նախապայման է արդար և

---

<sup>17</sup>Տե՛ս ՀՀ 2014-2025 հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, <https://www.gov.am/files/docs/1322.pdf>

<sup>18</sup> Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը տնտեսական արձագանքման ծրագիրը և գործողությունների պլանը հաստատելու մասին, ընդ. 21.02.2021 <https://www.arlis.am/documentview.aspx?docID=149837>

<sup>19</sup>Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը ՀՀ հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության ընդունման մասին, ընդ. 13.05.2022, ուժի մեջ է մտել 20.05.2022, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=162791>

կայուն վերաբաշխման համակարգերի ձևավորման համար, իսկ վերջիններիս հաջողությունը, իր հերթին, ամրապնդում է կառավարման արդյունավետության ինստիտուցիոնալ հիմքերը:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը պետության վերաբաշխիչ քաղաքականությունը և կառավարման արդյունավետությունն են՝ որպես հետխորհրդային երկրների պայմաններում սոցիալ-տնտեսական զարգացման և հանրային քաղաքականության ձևավորման հիմնական քաղաքիչներ:

Հետազոտության առարկան վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության գնահատման մեխանիզմները, գործոններն ու առանձնահատկություններն են՝ հաշվի առնելով հետխորհրդային պետությունների ինստիտուցիոնալ զարգացածության մակարդակը, կառավարման որակը և սոցիալ-տնտեսական միջավայրը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել և վերլուծել վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության օրինաչափությունները՝ գնահատելով հետխորհրդային պետությունների համատեքստում դրանց ազդեցությունը սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացների վրա: Նշված նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ հետազոտական խնդիրները.

Խնդիր 1. Հիմնավորել պետության վերաբաշխիչ քաղաքականության էությունն ու նշանակությունը հանրային քաղաքականության մշակման և իրականացման համալսելիքում

- Տարբերակել հանրային քաղաքականության հիմնական տիպերը՝ բաշխիչ, կարգավորիչ, վերաբաշխիչ և հարակազմիչ, սահմանել «վերաբաշխիչ քաղաքականություն» հասկացությունը.
- Վերլուծել վերաբաշխիչ քաղաքականության կապը կայուն զարգացման տնտեսական, սոցիալական և ինստիտուցիոնալ քաղաքիչների հետ.
- Հստակեցնել վերաբաշխիչ քաղաքականության իրականացման հիմնական մեխանիզմները (հարկային, սոցիալական, բյուջետային գործիքներ), ինչպես նաև հայտնաբերել այն գործոնները, որոնք ազդում են դրա արդյունավետության վրա (տնտեսական կառուցվածք, եկամուտների բաշխում, հարկային համակարգ):

Խնդիր 2. Ուսումնասիրել վերաբաշխիչ քաղաքականության միջազգային պրակտիկան և առկա միպոմները զարգացած երկրներում՝ կենտրոնանալով ՏՀՀԿ երկրների փորձի վրա

- *Հիմնավորել և վերլուծել* վերաբաշխիչ քաղաքականության վրա սոցիալական արդարության և տնտեսական անհավասարության ընկալման ազդեցությունը.
- *Վեր հանել* վերաբաշխիչ քաղաքականություն-կառավարման արդյունավետություն հարաբերակցության առանձնահատկությունները զարգացման հայեցակարգի շրջանակում.
- *Ներկայացնել* վերաբաշխիչ քաղաքականության մշակման և իրականացման ՏՀՀԿ երկրների հիմնական մոդելները:  
*խնդիր 3. Հետազոտել վերաբաշխիչ քաղաքականության իրականացման արդյունավետության գնահատման հիմքերի կայացումը և զարգացումը (հետխորհրդային երկրների օրինակով)*
- *Վերլուծել* հետխորհրդային տարածքում արդյունավետ կառավարման հայեցակարգի ընկալման և փոխակերպման միտումները.
- *Գնահատել* վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցությունը հետխորհրդային երկրներում՝ կենտրոնանալով հայաստանյան պրակտիկաների ուսումնասիրության վրա:

**Ատենախոսության տեսամեթոդական հիմքը:** Հետազոտության մեթոդաբանական հիմքը ձևավորվել է համակցված մոտեցմամբ. կիրառվել են որակական և քանակական մեթոդներ: Հիմնական մեթոդաբանական մոտեցումները և կիրառված մեթոդներն են.

1. քննարկվող խնդրի վերաբերյալ համապարփակ պատկերացում կազմելու համար, ինչպես նաև թեմային առնչվող հեղինակների գիտական ներդրումները, նրանց մոտեցումների տարբերությունները, հակասությունները և փոխլրացումները բացահայտելու նպատակով իրականացվել է թեմայի վերաբերյալ առկա գիտական *գրականության վերլուծություն*:

2. *Համակարգային մոտեցում*. կիրառվել է պետության վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցությունը որպես ամբողջական համակարգ դիտարկելու նպատակով:

3. *Դեպքային ուսումնասիրության մեթոդ*. օգտագործվել է ՏՀՀԿ, ինչպես նաև հետխորհրդային պետությունների, այդ թվում՝ նաև Հայաստանի պետական կառավարման համակարգերի կառուցվածքային առանձնահատկությունները, ինստիտուցիոնալ կայունության մակարդակը և դրանց ազդեցությունը վերաբաշխման գործընթացների վրա գնահատելու նպատակով:

4. Համեմատական վերլուծության մեթոդ. թույլ է տվել բացահայտել հետխորհրդային տարբեր երկրների վերաբաշխման քաղաքականության և կառավարման արդյունավետության ընդհանուր ու տարբերակիչ հատկանիշները, առանձնացնել հաջողված և անարդյունավետ փորձերը:

5. Վիճակագրական և էմպիրիկ վերլուծության մեթոդներ. օգտագործվել են քանակական տվյալների մշակման, համաթվերի (օր.՝ Պիրսոնի հարաբերակցային գործակից, Gini, Government Effectiveness Index) համեմատական գնահատման և տվյալների միջև փոխկապակցվածությունների բացահայտման նպատակով:

6. Վերլուծության, համադրման և ընդհանրացման մեթոդներ. կիրառվել են վերաբաշխման և կառավարման արդյունավետության կապը և դրանց ազդեցությունը սոցիալ-տնտեսական ցուցանիշների վրա գնահատելու նպատակով՝ հիմք ընդունելով տնտեսական և սոցիալական տվյալները: Իր հերթին, ընդհանրացումը կիրառվել է հետազոտության ընթացքում ստացված արդյունքները համակարգելու, եզրակացություններ ձևակերպելու և գիտական տեսանկյունից հիմնավորված առաջարկություններ մշակելու համար:

Այսպիսով, հետազոտության մեթոդաբանական հիմքը հնարավորություն է տալիս համակցված ձևով վերլուծելու վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցությունը՝ ապահովելով տեսական հիմնավորում, տվյալների համեմատական գնահատում և գործնական եզրակացությունների ձևավորում:

### **Ատենախոսության գիտական նորույթը:**

-Նախ՝ հայաստանյան հետազոտական դաշտում առաջին անգամ իրականացվել է վերաբաշխիչ քաղաքականության համալիր և համապարփակ վերլուծություն քաղաքական գիտության տեսանկյունից՝ ապահովելով թեմայի նկատմամբ գիտականորեն նոր հայացք և համակարգված մոտեցում:

-Հետազոտությունն առաջարկում է համակցված մոտեցում վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության ուսումնասիրությանն ու գնահատմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով հետխորհրդային պետությունների սոցիալ-տնտեսական և քաղաքական-ինստիտուցիոնալ առանձնահատկություններին, մասնավորապես՝

1. Առաջարկվում է, այսպես կոչված, համակարգային տեսա-մեթոդաբանական մոդել, որը բացահայտում է վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության

փոխհարաբերակցությունը և ազդեցությունը սոցիալ-տնտեսական զարգացման ցուցանիշների վրա:

2. Առաջին անգամ համակցված ձևով վերլուծվում են վերաբաշխման մեխանիզմներն ու կառավարման արդյունավետության ցուցիչները՝ որպես փոխկախյալ գործոններ, որոնք համատեղ ձևավորում են պետական քաղաքականության արդյունավետության մակարդակը:

3. Բացահայտվում են հետխորհրդային պետությունների ինստիտուցիոնալ և կառավարչական զարգացման առանձնահատկությունները, որոնք ազդում են վերաբաշխման քաղաքականության իրականացման հաջողության կամ ձախողման վրա:

4. Ներկայացվում են գործնական եզրակացություններ և առաջարկություններ, որոնք կարող են կիրառվել պետական քաղաքականությունների մշակման, հանրային կառավարման համակարգի բարելավման և սոցիալական արդարության ապահովման գործընթացներում:

**Ատենախոսության գիտատեսական և կիրառական նշանակությունը** բազմակի է: Աշխատանքի գիտատեսական նշանակությունն այն է, որ այն համալրում և հարստացնում է վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության վերաբերյալ առկա գիտական գիտելիքների շրջանակը՝ առաջարկելով տեսական նոր մոտեցումներ դրանց փոխկապակցվածության բացատրության համար: Մասնավորապես, տեսական առումով աշխատանքը՝

- հիմնավորում է վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության մոդելը՝ հիմնված ինստիտուցիոնալ զարգացման և հանրային կառավարման տեսահայեցակարգային հենքերի, մասնավորապես, Թ. Լոուիի հանրային քաղաքականությունների տիպաբանական տեսության վրա:

- Լրացնում է հետխորհրդային երկրների սոցիալ-տնտեսական զարգացման ուսումնասիրությունների հենքը՝ առաջարկելով նոր վերլուծական մոտեցում այդ երկրների կառավարման համակարգերի արդյունավետ գործառնությունը գնահատելու համար:

Աշխատանքի կիրառական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ վերջինիս արդյունքները կարող են օգտագործվել պետական կառավարման, տնտեսական քաղաքականության և սոցիալական ծրագրերի մշակման և արդյունավետության գնահատման գործընթացներում, մասնավորապես՝

- պետական մարմինների կողմից՝ հանրային քաղաքականության արդյունավետության գնահատման և բարելավման նպատակով,

- միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների կողմից՝ հետխորհրդային երկրների կառավարման և սոցիալական քաղաքականությունները գնահատելիս,

- գիտահետազոտական կառույցներում և կրթական գործընթացներում՝ որպես տեսական և գործնական ուսումնական նյութ:

Այսպիսով, աշխատանքի գիտատեսական և կիրառական նշանակությունը դրսևորվում է թե՛ տեսական նորարարությամբ, որը խորացնում է գիտական պատկերացումները պետական վերաբաշխման և կառավարման փոխազդեցության մասին և թե՛ գործնական արժեքով, որն ապահովում է կիրառելի մեթոդաբանական հիմք պետական կառավարման բարելավման և սոցիալական արդարության բարձրացման ուղղությամբ:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:** Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները զեկուցվել և քննարկվել են ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի նախաձեռնած «Քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների» ամենամյա գիտաժողովի (2024), ԵՊՀ համապատասխան ուղղությունների կրթական ծրագրերում («Հանրային կառավարում», «Հանրային քաղաքականություն») կազմակերպված դասընթաց-քննարկումների շրջանակում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են տասը գիտական հրապարակումներում:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք հիմնական գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի **ներածությունում** հիմնավորվում է թեմայի արդիականությունը, առաջադրվում են հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացվում են տեսամեթոդական հիմքն ու գիտական նորույթը, աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը, ինչպես նաև մատնանշվում են վերջինիս փորձարկման և կառուցվածքի մասին տեղեկություններ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից և եզրակացություններից:

Առաջին գլուխը՝ **«Պետության վերաբաշխիչ քաղաքականությունը հանրային քաղաքականության մշակման և իրականացման համատեքստում»**, նվիրված է հետազոտության տեսական հիմքերին և նպատակ ունի ստեղծելու ամուր հայեցակարգային հենք վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության միջև փոխադեցության բարդ համակարգի վերլուծության և գնահատման համար:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ **«Պետության վերաբաշխիչ քաղաքականությունը և կայուն զարգացման հայեցակարգը»**, ներկայացվում է կայուն զարգացման հայեցակարգը՝ որպես պետության որակապես նոր գործառույթ, որը միավորում է տնտեսական աճը, բնապահպանական կայունությունը և սոցիալական արդարությունը՝ ապահովելով պետության երկարաժամկետ և հավասարակշռված սոցիալ-տնտեսական առաջընթացը: Այն հիմնված է բնություն-հասարակություն-պետություն համակարգի ներդաշնակեցման և ռեսուրսների պատասխանատու օգտագործման սկզբունքների վրա: Իրականացված վերլուծությունից պարզ է դառնում, որ թեև կայուն զարգացման գաղափարն այսօր չունի միասնական սահմանում, սակայն այն ընկալվում է որպես կառավարելի և վերահսկելի զարգացում, որը չի սպառնում ապագա սերունդների կենսական հնարավորություններին: Իր հերթին, պետության վերաբաշխիչ քաղաքականությունը դառնում է կայուն զարգացման առանցքային գործիքներից մեկը՝ ուղղված տնտեսական արդյունավետության, սոցիալական հավասարության և հանրային բարեկեցության ապահովմանը: Ենթագլուխն ամփոփվում է այն դրույթով, որ կայուն զարգացման նպատակներին հասնելը կախված է պետական կառավարման արդյունավետությունից և հանրային քաղաքականության ճիշտ կողմնորոշումներից:

Գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Հանրային քաղաքականության տիպերը և իրականացման ձևերը»**, մատնանշվում է այն գաղափարը, որ Թեոդոր Լոուփի հանրային քաղաքականության տիպերի տեսությունը՝

բաշխիչ, վերաբաշխիչ, կարգավորիչ և հարակազմիչ քաղաքականության տիպերի դասակարգմամբ, կարևոր հիմք է հանդիսացել քաղաքականության բովանդակությունը և գործընթացները վերլուծելու համար, մասնավորապես ընդգծելով, որ «policy-ն է որոշում politics-ը»: Իրենց հերթին, հետազոտող-քննադատներ Պիտեր Շտայնբերգերը, Ջոն Անդերսոնը և Էյնսի Քելլոուն անդրադարձել են Լոուիի դասակարգման սահմանափակումներին՝ առաջարկելով քաղաքականության արդյունավետ իրականացման համար հաշվի առնել համոզման, շահերի փոխհարաբերությունների և հանրային/մասնավոր ռեսուրսների դերը: Քննադատների կողմից ընդգծվում է, որ քաղաքականությունը բազմաչափ և իրավիճակային է, ուստի որևէ «մաքուր» տիպային սահմանում չի կարող ամբողջովին արտացոլել դրա իրական էությունը:

Այս գլխի երրորդ ենթագլխում՝ **«Վերաբաշխիչ քաղաքականության սոցիալ-տնտեսական ասպեկտները և իրագործման նախադրյալները»**, հիմնավորվում է, որ պետության վերաբաշխիչ գործառույթը կարևոր դեր է խաղում սոցիալական հավասարության և տնտեսական կայունության ապահովման գործում՝ մեղմելով հասարակության եկամուտների ու հնարավորությունների անհավասարությունը: Առանձնացվում է վերաբաշխիչ քաղաքականության երկու ձև՝ *թիրախավորված*՝ ուղղված առավել խոցելի խմբերին, և *ընդհանրացված*՝ ընդգրկելով հասարակության մեծ մասին, որի իրականացման արդյունավետությունը կախված է սոցիալական, տնտեսական ու քաղաքական գործոններից: Այս համատեքստում վերաբաշխման գործիքներն ընդգրկում են հարկային քաղաքականությունը, սուբսիդիաները, նվազագույն աշխատավարձի քաղաքականությունը, հանրային բարիքների տրամադրումը և ակտիվների բաշխումը: Ենթագլխում ամփոփված են նաև վերաբաշխման նկատմամբ կողմ և դեմ փաստարկները, մասնավորապես, կողմնակիցները ընդգծում են սոցիալական արդարության, հասարակական կայունության և քաղաքացիների ապահովագրության կարևորությունը, իսկ քննադատները՝ շուկայական խթանների խափանումը և աշխատանքի խրախուսանքի նվազումը: Ենթագլխում առաջ է քաշված այն գաղափարը, որ թեև վերաբաշխման մեխանիզմները կարող են խթանել սոցիալական արդարության և կայունության նվաճումը, այդուհանդերձ դրանց կիրառումը որոշ սահմանափակումներ է առաջացնում շուկայի արդյունավետության տիրույթում: Արդյունքում, պետության գործառույթը վերաբաշխման ոլորտում պետք է լինի նպատակադրված և համապարփակ՝ համադրելով սոցիալական արդարությունը և տնտեսական արդյունավետությունը:



Երկրորդ գլուխը՝ **«Վերաբաշխիչ քաղաքականության իրականացման միջազգային փորձը և արդի միտումները (ՏՀԶԿ երկրների օրինակով)»**, խորամուխ է լինում վերաբաշխիչ քաղաքականության իրականացման պրակտիկաների՝ տնտեսապես զարգացած երկրների փորձառության ուսումնասիրության մեջ՝ ընդգծելով եկամուտների հավասարության, աղքատության նվազեցման և սոցիալական արդարության ապահովման արդյունավետությունը տարբեր երկրների համապատկերում:

Երկրորդ գլխի առաջին՝ **«Արդարության և սոցիալական անհավասարության ընկալումը վերաբաշխիչ քաղաքականության իրականացման համատեքստում»** ենթագլխում անդրադարձ է կատարվում վերաբաշխիչ քաղաքականության նկատմամբ հասարակական այս կամ այն վերաբերմունքի ձևավորման հիմնահարցին. մասնավորապես նշվում է, որ վերջինս կախված է ինչպես սոցիալ-տնտեսական օբյեկտիվ գործոններից, այնպես էլ ձևավորված սուբյեկտիվ ընկալումներից՝ ներառյալ անհավասարության, սոցիալական մոբիլության և արդարության մասին հասարակական պատկերացումները: Հասարակությունը տարբեր կերպ է գնահատում անհավասարության չափն ու արդարացիությունը՝ հիմնվելով իր իսկ պատմական, մշակութային և գաղափարախոսական փորձի, ինչպես նաև պետական ինստիտուտների թափանցիկության ու վստահության աստիճանի վրա: Ենթագլխում հատուկ ուշադրություն է հատկացվում «միջին ընտրողի» դիրքին, որը պայմանավորում է եկամուտների պրոգրեսիվ հարկման արդյունավետությունը: Մյուս կողմից, գաղափարական ու պատմական մոտեցումների տարբերությունները (ամերիկյան և եվրոպական), բացատրում են հասարակական վերաբերմունքի տարամտությունը եկամուտների վերաբաշխման հարցում: Աշխարհագրական և սոցիալ-տնտեսական տարբերություններն է՛լ ավելի են մեծացնում այս ընկալումների տարբերությունները: Ենթագլխի եզրափակիչ միտքն այն է, որ քաղաքական և ինստիտուցիոնալ միջավայրը, հասարակական ընկալումները և սոցիալական մոբիլությունը միասին ձևավորում են պետության վերաբաշխիչ քաղաքականության նկատմամբ հասարակության պահանջը և դրա արդյունավետության մակարդակը:

Գլխի երկրորդ ենթագլխում՝ վերնագրված **«Վերաբաշխիչ քաղաքականության իրականացման առկա միտումները ՏՀԶԿ երկրներում»**, խոսվում է այն մասին, որ վերջին տասնամյակներին ՏՀԶԿ անդամ պետություններում եկամուտների անհավասարությունը մեծացել է նույնիսկ Հյուսիսային Եվրոպայի համահարթ համարվող երկրներում, և

դա պայմանավորված է շուկայական եկամուտների բաշխման, աշխատանքի շուկայի կառուցվածքի փոփոխությունների ու ժողովրդագրական գործոններով: Հասարակությունը, չնայած հանրային ծառայություններից որոշ անբավարարվածությանը, շարունակում է աջակցել պետության կողմից հոգուտ աղքատների իրականացվող վերաբաշխիչ քաղաքականությանը: ՏՀԶԿ երկրներում վերաբաշխումը հիմնականում իրականացվում է սոցիալական տրանսֆերտների, սոցիալական ծախսերի ու հարկման միջոցով, ինչը կրճատում է շուկայական եկամուտների անհավասարությունը միջինը մոտ 27%-ով: Այս երկրներում վերաբաշխման արդյունավետությունը կախված է տեղական սոցիալ-տնտեսական պայմաններից. այն նպատակ ունի ոչ միայն հասնելու աղքատության ցուցանիշների մեղմմանը, այլև հավասար հնարավորությունների և սոցիալական արդարության ապահովմանը: Ավելին, սոցիալական քաղաքականության կենտրոնացումը կրթության, առողջապահության և կենսաթոշակների վրա նպաստում է երկարաժամկետ տնտեսական և սոցիալական կայունության պահպանմանը: Հետևաբար, եկամուտների հավասարակշռված բաշխման և հանրային ծառայությունների մատուցման համակցումը ՏՀԶԿ անդամ պետությունների սոցիալական քաղաքականության առանցքային նպատակ և նախապայման է՝ հասարակության բոլոր խմբերի համար հավասար հնարավորությունների ապահովման համար:

Գլխի երրորդ ենթագլխում՝ «**Վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության հարաբերակցության առանձնահատկությունները զարգացման հայեցակարգի համատեքստում**» վերնագրով, քննվում է «կառավարում» լայն և բազմակողմանի եզրույթը, որն ընդգրկում է հասարակական կյանքի կազմակերպման, ռեսուրսների բաշխման, իշխանության և պետական ինստիտուտների գործունեության բոլոր կողմերը: Ներկայիս մոտեցումներում կառավարումը դիտարկվում է որպես պետության սոցիալ-տնտեսական, քաղաքական և իրավական գործառույթների արդյունավետ իրականացման միջոց, որը ներառում է թափանցիկությունը, հաշվետվողականությունը, օրենքի գերակայությունը և կոռուպցիայի վերահսկումը: Իր հերթին, արդյունավետ կառավարումը խթանում է տնտեսական աճը, բարելավում հանրային ծառայությունների որակը, աջակցում ներդրումներին և մարդկային կապիտալի զարգացմանը, ինչն էլ օգնում է կրճատելու աղքատությունը և հասնելու սոցիալական հավասարության: Ենթագլխում խոսվում է նաև կառավարման և աճի/վերաբաշխման միջև առկա երկկողմ փոխհարաբերությունների մասին. լավ կառավարումը կարող է

օպտիմալացնել աճի և սոցիալական բարիքների բաշխման գործընթացը, մինչդեռ ոչ արդյունավետ կառավարումը՝ խորացնել անհավասարությունը և նվազեցնել ներդրումների ծավալը: Հաշվի առնելով տեսական և էմպիրիկ բազմազան ուսումնասիրությունները՝ պարզ է դառնում, որ բարենպաստ ինստիտուցիոնալ միջավայրն ու պետական քաղաքականության պատշաճ գործարկումը առաջնահերթ են սոցիալ-տնտեսական կայունության և զարգացման համար: Եզրահանգումն այն է, որ արդյունավետ կառավարումը աճի, հավասարության և հանրային բարիքների հասանելիության հիմնական նախապայմանն է, որտեղ պետական ինստիտուտների կայացումը և դերակատարության ամրապնդումը դրա կարևորագույն բաղադրիչներից են:

Ատենախոսության երրորդ՝ «**Վերաբաշխիչ քաղաքականության իրականացման արդյունավետության գնահատման հիմքերի կայացումը և զարգացումը (հետխորհրդային երկրների օրինակով)**» գլուխն ուսումնասիրում է քննվող երկու կատեգորիաների հարաբերակցման հետխորհրդային պետությունների, մասնավորապես Հայաստանի Հանրապետության փորձառությունը:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «**Արդյունավետ կառավարման հայեցակարգի ընկալումը և փոխակերպումը հետխորհրդային տարածքում**», քննարկվում է այն հարցը, որ արդյունավետ կառավարման հայեցակարգը 1990-ական թթ. դարձավ միջազգային զարգացման օրակարգի կենտրոնական տարր՝ որպես տնտեսական աճի, սոցիալական ինտեգրման և կոռուպցիայի նվազեցման երաշխիք: Հայեցակարգի էվոլյուցիան ցույց է տալիս անցումը շուկայի կառուցվածքային բարեփոխումներից դեպի ինստիտուտների և պետական կառավարման արդյունավետության կարևորության ճանաչում: Միջազգային հեղինակավոր կազմակերպություններից Համաշխարհային բանկն ու ՄԱԿ-ը առանձնացրել են կառավարության, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի փոխգործակցության, թափանցիկության, հաշվետվողականության և օրենքի գերակայության կարևորությունը:

Հետխորհրդային երկրներում արդյունավետ կառավարման իրականացումը տարբերվել է շուկային և աստիճանական բարեփոխումների ռազմավարություններից, ինչը ազդել է ինստիտուցիոնալ կայունության և սոցիալական անհավասարության մակարդակի վրա: Իր հերթին, Մ. Գրինդլի առաջ քաշած «Good Enough Governance»-ի մոտեցումը ընդգծում է, որ բարեփոխումները պետք է լինեն իրագործելի և տեղական համատեքստին հարմարվող: Ընդհանուր առմամբ, արդյունավետ կառավարումը դեռևս զարգացման և

սոցիալական արդարության ապահովման կարևորագույն գործիք է, սակայն դրա իրականացման հաջողությունը կախված է երկրի ներքին քաղաքական, ինստիտուցիոնալ և սոցիալական առանձնահատկություններից: Ենթազուգահեռ եզրափակվում է այն պնդմամբ, որ արդյունավետ կառավարման սկզբունքների որդեգրումը մեկ միասնական լուծում չէ. այն ազգային պետության ռազմավարական գործիք է, որը պետք է հարմարեցվի տեղական պայմաններին և ապահովի պետական, հասարակական և տնտեսական հատվածների միջև հավասարակշռված և համապարփակ փոխգործակցություն:

Գլխի երկրորդ ենթազվխում՝ «**Վերաբաշխիչ քաղաքականության և արդյունավետ կառավարման հարաբերակցման առանձնահատկությունները հետխորհրդային երկրներում**», մատնանշվում է հետևյալը. հետխորհրդային երկրներում արդյունավետ կառավարումն ու վերաբաշխիչ քաղաքականությունը խիստ փոխկապակցված երևույթներ են, որոնք ազդում են սոցիալական հավասարության, քաղաքական կայունության և տնտեսական զարգացման վրա: 1990-ականների սկզբից սկիզբ առած շոկային բարեփոխումները, ՀՆԱ-ի ցուցանիշների անկումը և քաղաքական անկայունությունը մեծացրին եկամուտների անհավասարությունը՝ ծնելով սոցիալական նոր մարտահրավերներ: Այս համատեքստում Մերձբալթյան երկրները հաջողությամբ իրականացրին ժողովրդավարական բարեփոխումներ և բարձր ցուցանիշներ գրանցեցին կառավարման արդյունավետության, հաշվետվողականության և կոռուպցիայի վերահսկման առումով, մինչդեռ Կենտրոնական Ասիայի որոշ երկրներ մնացին ավտորիտար կառավարման և թույլ ինստիտուտների ազդեցության ներքո: Այսպիսով, հաջողված վերաբաշխիչ քաղաքականությունը նվազեցնում է սոցիալական անհավասարությունը, բարձրացնում հասարակության վստահությունն ու պետական կառավարման արդյունավետությունը, սակայն դրա իրականացման հաջողությունը պայմանավորված է պետական ինստիտուտների որակով, քաղաքական կամքով և ինստիտուցիոնալ կայուն միջավայրով:

Որպես ենթազվխի ամփոփում բերվում է այն դրույթը, որ հետխորհրդային երկրներում կառավարման արդյունավետությունն ու վերաբաշխիչ քաղաքականությունը փոխկապակցված են. հարստության արդարացի բաշխումն ամրապնդում է կառավարումը, իսկ ինստիտուցիոնալ կայացած համակարգը հնարավորություն է տալիս իրականացնելու առավել արդյունավետ սոցիալական քաղաքականություն և ապահովելու սոցիալ-տնտեսական երկարաժամկետ կայունություն:

Գլխի երրորդ՝ «Վերաբաշխիչ քաղաքականության և արդյունավետ կառավարման հարաբերակցման առանձնահատկությունները. դեպքային ուսումնասիրություն ՀՀ օրինակով», ենթագլխում փաստարկվում է, որ ՀՀ սոցիալ-տնտեսական քաղաքականությունն ուղղված է հասարակության բարեկեցության ապահովմանը, եկամուտների անհավասարության մեղմմանը և ներառական տնտեսական աճի խթանմանը: Հարկաբյուջետային քաղաքականությունը, պետական ծախսերի պլանավորումն ու հարկային բարեփոխումները վերաբաշխման հիմնական գործիքներն են՝ հատկապես ճգնաժամային իրավիճակներում սոցիալական կայունությունը պահպանելու խնդիր լուծելիս:

ՀՀ-ում կառավարման արդյունավետության և կարգավորման բարձր մակարդակն ուղղորդում է ռեսուրսների արդար բաշխումը և սոցիալական կայունությունը, ինչը տեսանելի է «Կառավարություն 4.0» ռազմավարության շրջանակներում իրականացվող բարեփոխումներում: Հետևաբար, Հայաստանի տնտեսական ու սոցիալական քաղաքականության հաջողությունը և երկարաժամկետ կայունությունը պայմանավորված են վերաբաշխիչ քաղաքականության արդյունավետությամբ և պետական կառավարման համակարգի կայացածությամբ:

**Եզրակացություններում** ամփոփվում են հետազոտության հիմնական արդյունքները: Աշխատանքը վերահաստատում է կենտրոնական փաստարկն առ այն, որ վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության միջև փոխկախվածությունն անհերքելի է. ավելին, այդ կապը ձևավորում է սոցիալ-տնտեսական զարգացման նոր մոդել և խթանում կառավարման կայուն և կայացած համակարգերի ձևավորումը:

Հենվելով ատենախոսության եզրակացությունների վրա՝ ներկայացնում ենք հետևյալ *կիրառական առաջարկությունները*.

1. Հաշվի առնելով այն, որ ՀՀ-ի պարագայում վերաբաշխիչ քաղաքականությունը երկրի տնտեսական ռազմավարության առանցքային բաղադրիչն է՝ իր հարկման և բյուջետավորման բաղադրիչներով, անհրաժեշտ ենք համարում *վերաբաշխիչ քաղաքականության համակարգային և երկարաժամկետ ռազմավարության ձևավորումը*, որը կմիավորի հարկային, բյուջետային և սոցիալական քաղաքականությունների կառուցակարգերը՝ նպատակ ունենալով մեծացնելու պետական բյուջեի վերաբաշխիչ կարողությունը, ինչպես նաև ամրապնդելու հարկային կարգապահությունն ու ապահովելու կառավարման թափանցիկությունը: Այս մոտեցման

կիրառումը կնպաստի սոցիալական բևեռացվածության նվազմանը, պետական ռեսուրսների արդյունավետ վերաբաշխմանը և ներառական տնտեսական աճի կայուն հիմքերի ձևավորմանը՝ ամրապնդելով Հայաստանի՝ որպես սոցիալական պետության ինստիտուցիոնալ հիմքերը:

2. ՀՀ-ում նպատակահարմար ենք համարում առաջարկել *մշակելու վերաբաշխիչ քաղաքականության համապարփակ և ճկուն ռազմավարություն*, որը կհիմնվի տնտեսական պարբերաշրջանների և արտաքին շուկերի ազդեցությանը հարմարվող կառուցակարգերի վրա՝ ապահովելով սոցիալական կայունություն և մակրոտնտեսական հավասարակշռություն: Սա, առաջին հերթին, ենթադրում է պետական բյուջեի կառուցվածքի դիվերսիֆիկացում՝ վերացնելով չափազանց մեծ կախվածությունն առանձին ոլորտներից և ապահովելով ներդրումների համաչափ բաշխում հավասարակշռված և կայուն սոցիալ-տնտեսական աճ ապահովող ոլորտների միջև: Երկրորդ՝ անհրաժեշտ է ստեղծել ֆինանսական քաղաքականության հակացիկլային գործիքներ՝ հնարավորություն տալով տնտեսական աճի տարիներին կուտակելու պահուստներ՝ ճգնաժամային փուլերում օգտագործելու և սոցիալ-տնտեսական կայունությունը պահպանելու նպատակներով: Երրորդ՝ անհրաժեշտ է սահմանել պետական պարտքի կայուն կառավարման նոր սկզբունքներ, ասել է թե՛ պարտքի կայունության հստակ շեմեր և պարտքային ռիսկերի նվազեցման կառուցակարգեր՝ նպատակ ունենալով սահմանափակելու արտաքին վարկային կախվածությունը և ավելացնելու ներքին եկամուտների մասնաբաժինը բյուջետային ծախսերի ֆինանսավորման մեջ:

3. Հաշվի առնելով COVID-19 համավարակով և պատերազմական իրավիճակով պայմանավորված որակապես նոր իրողությունները՝ ՀՀ-ում *անհրաժեշտ է մշակել և իրականացնել հեղձնաժամային վերաբաշխիչ քաղաքականության համալիր ռազմավարություն*, որը կվերաբերի ոչ միայն կարճաժամկետ հակաճգնաժամային արձագանքին, այլև երկարաժամկետ սոցիալ-տնտեսական կայունության և անվտանգության ապահովմանը: Առաջին հերթին, անհրաժեշտ է ձևավորել ճգնաժամային կառավարման և արձագանքման ինստիտուցիոնալ կառուցակարգ, որը հնարավորություն կտա արագ և համակարգված արձագանքելու համավարակային, ռազմական կամ սոցիալ-տնտեսական այլ ճգնաժամների՝ առանց պետական ֆինանսների կառավարման համակարգի կայունության խաթարման: Երկրորդ՝ անհրաժեշտ է կատարել սոցիալական աջակցության համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխում՝ իրականացնելով խոցելի խմբերի աջակցությունից դեպի

զարգացման ներուժի վրա հիմնված սոցիալական քաղաքականություն՝ նպաստելով զբաղվածության աճին և աղքատության կառուցվածքային պատկերի փոփոխմանը: Երրորդ՝ անհրաժեշտ է ապահովել հանրային ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացում՝ պետական ծախսերի վերահսկման, թվայնացման և հաշվետվողականության բարձրացման միջոցով: Առաջարկվող ռազմավարական ուղղությունների իրականացումը կնպաստի Հայաստանի՝ որպես սոցիալ-անվտանգային պետության կայացմանը, որտեղ տնտեսության վերակառուցումը, սոցիալական պաշտպանությունը և ազգային անվտանգությունը դիտարկվում են որպես փոխկապակցված և փոխլրացնող առաջնահերթություններ:

4. Նպատակահարմար ենք համարում ՀՀ-ում *հարկաբյուջեպային համակարգի համապարփակ բարեփոխում իրագործելը*, որը միաժամանակ կբարձրացնի պետական ֆինանսների կառավարման արդյունավետությունը և կնպաստի կայուն զարգացման երկարաժամկետ ռազմավարության ձևավորմանը: Սա ենթադրում է տնտեսական աճ՝ առանց սոցիալական անհավասարության խորացման, իսկ դա, իր հերթին, պահանջում է թիրախավորված սոցիալական ծրագրերի ֆինանսավորում և միաժամանակ արդյունավետ հարկային բարեփոխումների շարունակականություն: Այս առաջարկի գործնական կիրարկման համար անհրաժեշտ է նախ՝ ամրապնդել պետական ֆինանսների վերահսկողության և հաշվետվողականության կառուցակարգերը՝ պետական բյուջեի կատարման գործընթացում մշտադիտարկման և գնահատման թվայնացված գործիքներ ներդնելով, երկրորդ՝ խթանել արդյունքահեն բյուջետավորումը՝ պետական ծախսերը կապելով չափելի արդյունքների և արդյունավետության ցուցանիշների հետ՝ բյուջեպային քաղաքականությունը դարձնելով առավել թափանցիկ և պատասխանատու, և երրորդ՝ կիրառելու ոլորտային վերաբաշխումների օպտիմալացում և ծախսերի առաջնահերթության հիման վրա ռեսուրսների վերաբաշխում, այն է՝ նվազ արդյունավետ կամ ցածր ազդեցությամբ ոլորտներից ֆինանսական հոսքերի վերաուղղորդում դեպի սոցիալ-տնտեսական բարձր արդյունքներ և ցուցանիշներ ապահովող բնագավառներ (կրթություն, առողջապահություն, նորարարություն և տեխնոլոգիաներ, կանաչ տնտեսություն, ենթակառուցվածքներ, մարդկային կապիտալ և այլն): Այս մոտեցման իրականացումը կապահովի պետական ֆինանսների կայուն կառավարում, կնվազեցնի ծախսերի անարդյունավետությունը և կապահովի ռեսուրսների նպատակային ուղղորդում:

5. Մյուս առաջարկը վերաբերում է համահարթ հարկման մոդելի ներդրումից հետո << *հարկային համակարգի կապարելագործմանը*: Մասնավորապես՝

- նախ՝ առաջարկվում է *ներդնել մասամբ պրոգրեսիվ հարկման համակարգ՝* սահմանելով չհարկվող նվազագույն եկամտի շեմ, որը կպաշտպանի ցածր եկամուտ ունեցողներին և կբարձրացնի սոցիալական արդարությունը՝ առանց վնասելու տնտեսական մրցունակությանը:

- երկրորդ՝ առաջարկվում է *ներդնել «հարկային արդարության համաթիվ»* և *թիրախավորված մշտադիտարկման համակարգ՝* հարկային բեռի բաշխման համաչափությունը և սոցիալական արդարության պահպանման մակարդակը պարբերաբար գնահատելու համար:

- երրորդ՝ առաջարկվում է *ներդնել «շքեղության հարկ»* *համակարգված մոդել՝* հավասարակշռելով բարձրարժեք գույքի և ոչ աշխատանքային եկամուտների հարկմամբ սոցիալական բեռը և ապահովելով լրացուցիչ միջոցներ սոցիալական ծրագրերի ֆինանսավորման համար:

- չորրորդ՝ առաջարկվում է *ներդնել հարկային բեռի բաշխման նոր կառուցակարգ,* որը կնվազեցնի աշխատանքի հարկման բեռը և կբարձրացնի կապիտալի եկամուտների հարկումը՝ ապահովելով արդար բաշխում և խթանելով արտադրողական գործունեությունը:

- հինգերորդ՝ անհրաժեշտ է *բարելավել հարկային վարչարարությունն ու հարկապտույնների վստահությունը* թվայնացման, իրազեկման և պարզեցված գործընթացների միջոցով, ինչպես նաև խթանել տեղական հարկային կայունությունը և ինքնուրույնությունը:

Ընդհանուր առմամբ, Հայաստանը կարող է հասնել ներառական տնտեսական աճի, սոցիալական համերաշխության և պետական կառավարման համակարգի որակական վերափոխման, եթե վերոնշյալ ռազմավարական ուղղությունները դառնան երկարաժամկետ պետական քաղաքականության հիմք: Այսպիսով, արդյունավետ կառավարումը և արդար վերաբաշխումը պետք է դիտվեն ոչ թե որպես առանձին գործընթացներ, այլ միևնույն պրոբլեմատիկայի երկու կողմեր, որոնք ապահովում են երկրի սոցիալ-տնտեսական կայունությունը և հանրային բարեկեցությունը:

Աշխատանքի «**Հավելվածներ**» բաժինը բովանդակում է այնտեղ տեղ գտած քանակական տվյալների համապարփակ վերլուծությունը՝ աղյուսակների, գծապատկերների և բանաձևերի միջոցով իրականացված հաշվարկների տեսքով:



**Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված հետևյալ գիտական հոդվածներում.**

1. Ասրյան Ն. «Պետության վերաբաշխիչ քաղաքականությունը կայուն զարգացման հայեցակարգի համատեքստում» // Լրատու Մեսրոպ Մաշտոց համալսարան: 2020, № 2 (24), էջ 81-90:

2. Ասրյան Ն. «Պետության վերաբաշխիչ գործառույթը հանրային քաղաքականության համատեքստում. սոցիալ-տնտեսական ասպեկտը և իրագործման քաղաքական նախադրյալները» // Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես: 2020, № 4 (9), էջ 136-145:

3. Ասրյան Ն. «Եկամուտների վերաբաշխման այլընտրանքային ձևերն ու եղանակները և բարեկեցության քաղաքականությունը» // Լրատու Մեսրոպ Մաշտոց համալսարան: 2021, № 2 (26), էջ 127-134:

4. Ասրյան Ն. «Արդարության և սոցիալական անհավասարության ընկալումը վերաբաշխիչ քաղաքականության իրականացման համատեքստում» // Հայկական քաղաքագիտական հանդես: 2021, էջ 133-150:

5. Ասրյան Ն. «Վերաբաշխիչ քաղաքականության և արդյունավետ կառավարման հարաբերակցության առանձնահատկությունները զարգացման հայեցակարգի համատեքստում» // Լրատու Մեսրոպ Մաշտոց համալսարան: 2021, № 1 (25), էջ 142-159:

6. Ասրյան Ն. «Թեոդոր Լոուիի քաղաքականության տիպերի տեսությունը» // Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն: 2021, № 1 (34), էջ 54-65:

7. Ասրյան Ն. «Վերաբաշխիչ քաղաքականության առկա միտումները տնտեսապես զարգացած երկրներում» // Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես: 2021, № 1 (12), էջ 124-139:

8. Ասրյան Ն. «Արդյունավետ կառավարման հայեցակարգի ընկալումը և փոխակերպումը հետխորհրդային տարածքում» // Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն: 2023, № 1 (40), էջ 88-101:

9. Асрян Н. Взаимосвязь между политикой перераспределения и эффективным управлением в постсоветских странах // Տարածաշրջան և աշխարհ: 2025, № 3 (58), էջ 244-249:

10. Ասրյան Ն. «Վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության գնահատման հայաստանյան համատեքստը» // Գիտական Արցախ: 2025, № 2 (25), էջ 127-140:

**АСРЯН НАРИНЕ ВЯЧЕСЛАВОВНА**

**ОСОБЕННОСТИ ОЦЕНКИ ВЗАИМОДЕЙСТВИЯ  
ПЕРЕРАСПРЕДЕЛИТЕЛЬНОЙ ПОЛИТИКИ И ЭФФЕКТИВНОСТИ  
ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ В ПОСТСОВЕТСКИХ  
ГОСУДАРСТВАХ**

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.02 “Политические институты и процессы”.

Защита диссертации состоится XX XX 2025 г. в 14:00 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА (адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1).

**РЕЗЮМЕ**

В диссертации исследуется проблемы корреляции и взаимодействия перераспределительной политики и эффективности государственного управления в постсоветских государствах. Оценка эффективности такого рода взаимодействия представляет собой достаточно сложный и комплексный процесс, который на ряду с другими факторами обусловлен историческими, институциональными и социально-экономическими особенностями постсоветского пространства. Перераспределительная политика, направленная на снижение социального неравенства и обеспечение базовых общественных благ, существенно влияет на легитимность государственной власти и доверие граждан к институтам власти. Вместе с тем, сама эффективность государственного управления в значительной степени определяет способность государства реализовывать перераспределительные механизмы эффективно, прозрачно, устойчиво и результативно.

В постсоветских странах данное взаимодействие характеризуется сочетанием наследия централизованной системы управления и стремлением к модернизации институтов. Часто наблюдаемые проблемы институциональных дефектов, коррупции, ограниченной подотчетности и неэффективности бюрократических структур снижают результативность перераспределительных программ. Вместе с тем, в государствах с более развитым уровнем государственного управления, перераспределительная политика способствует снижению бедности, развитию человеческого капитала и укреплению социальных гарантий.

Таким образом, особенностями оценки и понимания специфики данного взаимодействия являются необходимость комплексного анализа политико-административных факторов, учет уровня институционального развития, степени демократизации, прозрачности принятия решений и способности государства обеспечивать справедливое распределение ресурсов. Степень эффективности во взаимодействии этих двух базовых компонентов во многом определяет устойчивость социально-экономического развития как и само качество государственного управления в постсоветских странах.

**Во введении** работы обосновывается актуальность темы, выдвигаются гипотеза, объект, предмет, цель и задачи исследования, излагаются методологическая основа и научная новизна, теоретическая и прикладная значимость работы, а также указываются сведения о ее апробации и структуре.

В первой главе **«Перераспределительная политика государства в контексте разработки и реализации государственной политики»** рассматриваются теоретические основы проблематики, в частности, известная теория о типах государственной политики, выдвинутая американским исследователем Теодором Лоуи. Данная глава посвящена раскрытию сущности перераспределительной политики в контексте разработки и реализации государственной политики. В главе рассматривается и объясняется взаимосвязь между механизмами перераспределения и концепцией устойчивого развития, анализируются основные типы государственной политики и формы её осуществления, а также изучаются социально-экономические аспекты и институциональные предпосылки эффективной реализации перераспределительных механизмов.

Во второй главе **«Международный опыт и современные тенденции реализации политики перераспределения (на примере стран ОЭСР)»** проводится анализ международного опыта реализации перераспределительной политики на примере стран ОЭСР и современных доминирующих тенденциях в сфере перераспределительной политики и механизмов. В частности, рассматриваются представления об идеях справедливости и социальной неравномерности как ключевых ориентирах для формирования эффективных механизмов перераспределения. Далее, анализируются актуальные тенденции, типичные для стран ОЭСР, включая улучшение фискальных инструментов, развитие социальных программ и повышение адресности поддержки. Завершающий раздел раскрывает особенности взаимосвязи перераспределительной политики и

эффективности государственного управления в контексте концепции развития, подчеркивая роль и значимость сильных институтов, прозрачности и стратегического планирования. В целом глава демонстрирует, как современные государства используют перераспределительные меры для снижения неравенства и укрепления социально-экономической устойчивости.

В третьей главе **«Становление и развитие основ оценки эффективности реализации перераспределительной политики (на примере стран постсоветского пространства)»** исследуются формирование и развитие основ оценки эффективности реализации перераспределительной политики в постсоветских странах. В начале главы анализируется трансформация представлений об эффективном государственном управлении в постсоветском пространстве, где реформирование институтов и модернизация управленческих практик стали ключевыми вызовами переходного периода. Далее рассматриваются особенности взаимосвязи между перераспределительной политикой и эффективностью государственного управления в странах региона.

**Завершающий раздел** основывается на предметном исследовании кейса Армении, показывая, как национальные особенности, реформаторские инициативы и управленческие стратегии определяют результативность перераспределительных механизмов. В целом, глава раскрывает, каким образом постсоветские государства формируют собственные модели оценки эффективности и стремятся повысить качество перераспределительной политики в условиях институциональных и социально-экономических преобразований.

**THE SPECIFIC FEATURES OF ASSESSING THE INTERACTION BETWEEN  
REDISTRIBUTIVE POLICY AND GOVERNANCE EFFECTIVENESS IN POST-  
SOVIET STATES**

Dissertation under 23.00.02 –“Political Institutions and Processes,” aspiring to earn Ph.D. in Political Sciences. The defense of the dissertation will take place on 15 January 2026, at 14:00 at the Specialized Council 056 "Political Sciences and International Relations" of the RA MoESCS HESC, operating at Yerevan State University (Address: RA, Yerevan, 0025, 1 Alex Manoogian).

**SUMMARY**

The dissertation explores the dynamics of interaction between redistributive policies and the effectiveness of public administration systems in the post-Soviet states. Assessing the efficiency of interaction and correlation dimensions proves that this problematique is a rather complex and multidimensional endeavor shaped by the historical, institutional, and socio-economic characteristics of the post-Soviet region. Redistributive policy, aimed at reducing social inequality and providing essential public goods, significantly influences state and government legitimacy as well as citizens' trust in public institutions. Moreover, the effectiveness of public administration to a large degree determines the state's capacity to implement redistribution mechanisms in a transparent, sustainable, and results-oriented manner.

In the post-Soviet countries, this interaction is influenced by the coexistence of a centralized administrative legacy and the determined ambitions to modernize governance institutions. The commonly acknowledged challenges include though not limited to the institutional weaknesses, corruption, limited accountability, and bureaucratic inefficiency, factors that constrain the overall effect of the redistributive programs. However, in those states that yield the stronger governing systems, redistributive policies in fact contribute to poverty reduction, human capital development, and the strengthening of social protection mechanisms.

Therefore, the assessment of this interaction requires a comprehensive analysis of political and administrative factors, consideration of the level of institutional development, degree of democratization, transparency of decision-making processes, and the state's ability to ensure fair resource

allocation. The effectiveness of this interplay ultimately would determine the sustainability of socio-economic development and the quality of public administration in the post-Soviet states.

**The introduction section**, validates the relevance of the topic and actuality of the research, formulates the hypothesis, object and subject of research, the scope and objectives of the study, outlines its theoretical and methodological foundations and scientific novelty, and formulates the theoretical and practical significance of the dissertation, along with details of its approbation and structure.

The First Chapter, **“The State’s Redistribution Policy in the Context of Developing and Implementing Public Policy,”** examines the theoretical foundations of the study, with particular attention to Theodore Lowi’s public policy types theory. This chapter outlines the essence of redistributive policy within the broader framework of public policy design and implementation. It explores the relationship between redistributive mechanisms and the sustainable development concept, analyzes key types of public policy and their implementation forms, and discusses socio-economic factors and institutional prerequisites for the effective realization of redistributive measures.

The Second Chapter, **“International Experience and Contemporary Trends in Redistributive Policy Implementation (Based on OECD Countries),”** analyzes global practices of redistributive policy, drawing on examples from OECD member states. It examines the concepts of justice and social inequality as guiding principles for designing effective redistribution mechanisms. The chapter further discusses current trends in the OECD countries, including the modernization of fiscal instruments, expansion of social programs, and enhanced targeting of support measures. The final section focuses on the relationship between redistributive policy and governance effectiveness within the developmental paradigm, emphasizing the role of strong institutions, transparency, and the strategic planning. In sum, the chapter illustrates how the modern states use redistributive measures to mitigate inequality and strengthen socio-economic resilience.

The Third Chapter, **“Formation and Development of Approaches to Assessing the Effectiveness of Redistributive Policy Implementation (Based on Post-Soviet Countries),”** investigates the evolution of frameworks for assessing redistributive policy in the post-Soviet states. It starts with the analysis of the transformation of governance concepts in the post-Soviet context, where the institutional reforms and modernization of administrative practices emerged as the major challenges in the transition period. The

chapter then explores the specific features of the interplay between redistributive policy and governance effectiveness in the region.

**The final section** presents a case study of Armenia, demonstrating how national characteristics, reform initiatives, and administrative strategies have shaped the outcomes of redistributive mechanisms. In sum, the chapter shows how the post-Soviet states developed their own models for evaluating effectiveness and struggle to enhance the quality of redistributive policy in the context of ongoing institutional and socio-economic transformations.

A handwritten signature in dark ink, appearing to be 'H. H. H.', with a long horizontal stroke extending to the right.